ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» հոկտեմբերի 2014թ. N------Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՉԵԽՈՎԻ ՓՈՂՈՑԻ Հ. 34 ՇԵՆՔԻ Հ. 8/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի հ.95-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականությունն համարվող, Չեխովի փողոցի հ.34 շենքի հ.8/1 բնակարանը՝ 49.1 քմ մակերեսով, (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 16.05.2014թ. հ.16052014-01-0124 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Դավիթ Մարգարյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ՉԵԽՈՎԻ ՓՈՂՈՑԻ Հ.34 ՇԵՆՔԻ Հ.8/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Դավիթ Մարգարյանը դիմել է Երևանի քաղաքապետարան՝ Շենգավիթ վարչական շրջանի Չեխովի փողոցի հ.34 շենքի հ.8/1 հասցեում գտնվող, Երևան համայնքի սեփականությունն համարվող բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 16.05.2014թ. N16052014-01-0124 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարելու (նվիրելու) խնդրանքով:

Համաձայն Շենգավիթ վարչական շրջանի «Գավառ» համատիրության 04.08.2014թ.-ի տեղեկանքի՝ Դավիթ Մարգարյանի ընտանիքը դեռևս 1960-ական թվականներից բնակվում է քննարկվող բնակարանում, սակայն բնակարանի հատկացման վերաբերյալ փաստաթղթերը պահպանված չլինելու պաճառով չեն կարողացել սեփականաշնորհել տվյալ բնակարանը: Դավիթ Մարգարյանի հայրը, մայրը և քույրը 21.07.2014թ. համաձայնագրերով տվել են իրենց համաձայնությունները, որ վերոհիշյալ բնակարանն սեփականության իրավունքով անհատույց օտարվի Դավիթ Մարգարյանին:

Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի հ.95-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 3-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը կարող է անհատույց օտարվել միայն Երևան քաղաքի ավագանու որոշմամբ, բացառությամբ Ծրագրի 4-րդ կետի:

Ծրագրի 4-րդ կետով նախատեսված իրավական և/կամ փաստական հանգամանքների առկայության դեպքում Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանները, բնակելի տները և բնակելի տարածքները կարող են սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել քաղաքացիներին Երևանի քաղաքապետի որոշմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի հ.95-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքները, ուստի ք. Երևան, Շենգավիթ վարչական շրջանի Չեխովի փողոցի հ.34 շենքի հ.8/1 հասցեում գտնվող բնակարանն անհատույց օտարման համար անհրաժեշտություն է առաջացել ընդունելու Երևան քաղաքի ավագանու որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՉԵԽՈՎԻ ՓՈՂՈՑԻ Հ.34 ՇԵՆՔԻ Հ.8/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Չեխովի փողոցի հ.34 շենքի հ.8/1 հասցեում գտնվող, Երևան համայնքի սեփականությունն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՉԵԽՈՎԻ ՓՈՂՈՑԻ Հ.34 ՇԵՆՔԻ Հ.8/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Չեխովի փողոցի հ.34 շենքի հ.8/1 հասցեում գտնվող, Երևան համայնքի սեփականությունն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ